



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

1/06/3806 - 16

05/5631 - 16

Հ Ր Ա Մ Ա Ն № 311 - Ն

ք. Երևան

« 04 » 04 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N274-Ա
ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ) կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով և 39-րդ կետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչության կանոնադրությունը՝ համաձայն N1 հավելվածի.

2) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի իրավաբանական վարչության կանոնադրությունը՝ համաձայն N2 հավելվածի.

3) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կանոնադրությունը՝ համաձայն N3 հավելվածի.

4) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության կանոնադրությունը՝ համաձայն N4 հավելվածի.

5) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի արտաքին կապերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N5 հավելվածի.

6) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N6 հավելվածի.

7) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N7 հավելվածի.

8) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի քարտուղարության կանոնադրությունը՝ համաձայն N8 հավելվածի.

9) ՀՀ ԱԻՆ աշխատակազմի առաջին բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 9 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի մարտի 29-ի N300-Ա և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի N 173-Ա հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 247-Ա հրամանը:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:



U.SIGN

Ա.Երիցյան